Աջակցություն գյուղական համայնքներին 1988-ից

ՀՀ, ք. Երևան 0001
110 Նալբանդյան փ.
+374 60 499 010
info@shen.am
www.shen.am

ՇՆ- 38 21 նոյեմբերի, 2025թ.
Երևան

ՀՀ էկոնոմիկայի նախարար
Պարոն Գևորգ Պապոյանին

Հարգելի պարոն Պապոյան,

Սույնով «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպությունը հայտ է ներկայացնում՝ ընդգրկվելու ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Շեն կազմակերպությունը հիմնադրվել է 1988 թվականին և գործունեություն է ծավալում Հայաստանի հեռավոր գյուղական տարածքներում: Շենի առաքելությունն է խթանել հեռավոր խոցելի գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը և հզորացմանը համայնքի անդամների ակտիվ ներգրավմամբ: Շենն իր գործունեությամբ նպաստել է 2400-ից ավել հեկտար անմշակ հողերի մշակությանը, օրգանական գյուղատնեսության իրավակարգավորիչ դաշտի, ինչպես նաև առաջին օրգանական այգիների հիմնմանը, 80-ից ավել բնակավայրերում խմելու և ոռոգման ջրի համակարգերի վերականգնմանը, 60-ից ավել գյուղատնտեսական կոոպերատիվների և ոչ ֆորմալ խմբերի հզորացմանը, գյուղատնտեսական տեխնիկայի, վերամշակման և հետբերքահավաքային պահպանության հզորությունների ձեռքբերմանը:

2018 թվականից սկսած «Շեն» կազմակերպությունը ակտիվորեն ներգրավված է Հայաստանում գյուղատնտեսության ոլորտի քաղաքականությունների և իրավական դաշտի բարելավման աշխատանքներում:

Խնդրում եմ դիտարկել այս հայտը: Պահանջվող տեղեկատվությունը և փաստաթղթերը կցված են:

Հարգանքով՝

Հայկ Մինասյան
«Շեն» ԲՀԿ վարչության նախագահ